

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Վրաստանը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր, կարևոր նշանակություն տալով քաղաքացիական գործերով իրավական օգնության բնագավառում համագործակցության զարգացմանը, պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Գ Լ ՈՒ Խ Ի

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Իրավական պաշտպանություն

1. Մի Պայմանավորվող կողմի քաղաքացիները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում օգտվում են իրենց անձնական և գույքային իրավունքների նույն իրավական պաշտպանությունից, ինչ մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիները: Նրանք իրավունք ունեն ազատորեն և անարգել դիմել դատարաններ, դատախազություն և այլ հիմնարկներ, որոնց իրավասությանն են վերաբերում քաղաքացիական գործերը (այսուհետ՝ հիմնարկներ), ներկայացնել հայցեր և իրականացնել դատավարական այլ գործողություններ նույն պայմաններով, ինչ մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիները:
2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի տարածքում՝ նրա ազգային օրենսդրությանը համապատասխան հիմնադրված իրավաբանական անձանց նկատմամբ:
3. Սույն Պայմանագրի նպատակների համար «քաղաքացիական գործեր» տերմինը նշանակում է բոլոր այն գործերը, որոնք, Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի ազգային օրենսդրությանը համապատասխան, համարվում են քաղաքացիական գործեր:

Հոդված 2. Իրավական օգնությունը

Պայմանավորվող կողմերի հիմնարկները քաղաքացիական գործերով փոխադարձ իրավական օգնություն են ցույց տալիս՝ սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան և իրենց ազգային օրենսդրությամբ նախատեսված իրենց իրավասության շրջանակներում:

Հոդված 3. Անվճար իրավական օգնություն

Մի Պայմանավորվող կողմի քաղաքացիները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում օգտվում են անվճար իրավական օգնության իրավունքից այն նույն պայմաններով, ինչ սեփական քաղաքացիները:

Հոդված 4. Իրավական օգնության տեսակները

Պայմանավորվող կողմերը՝ հանձնարարությամբ, միմյանց իրավական օգնություն ցույց կտան փաստաթղթեր կազմելու և հանձնելու, հայցի ապահովման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, դատաքննության մասնակիցների, վկաների և փորձագետների հարցաքննման, փորձաքննության և տեղագնության անցկացման, դատական և այլ որոշումների ճանաչման և կատարման, այդ թվում՝ պարտապանների հետախուզման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, ինչպես նաև այլ դատավարական գործողություններ կատարելու միջոցով:

Հոդված 5. Իրավական օգնություն ցույց տալիս հաղորդակցման կարգը

Իրավական օգնություն ցույց տալիս Պայմանավորվող կողմերի հիմնարկները միմյանց հետ հաղորդակցվում են սույն հոդվածի 2-րդ կետում նշված կենտրոնական մարմինների միջոցով:

Սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված կենտրոնական մարմիններ են համարվում՝ այաստանի Հանրապետության համար՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, Վրաստանի համար՝ Վրաստանի արդարադատության նախարարությունը:

Հոդված 6. Իրավական օգնություն ցույց տալիս կիրառվող օրենսդրությունը

1. Հայցվող հիմնարկը իրավական օգնություն ցույց տալիս կիրառում է իր պետության ազգային օրենսդրությունը:
2. Իրավական օգնություն ցույց տալիս հայցվող հիմնարկը, հայցող Պայմանավորվող կողմի խնդրանքով, կարող է կիրառել նաև մյուս Պայմանավորվող կողմի դատավարական նորմերը, եթե միայն դրանք չեն հակասում հայցվող Պայմանավորվող կողմի ազգային օրենսդրությանը:

Հոդված 7. Լեզուն

Պայմանավորվող կողմերի հիմնարկները սույն Պայմանագրում շոշափվող բոլոր հարցերով փոխադարձաբար հաղորդակցվելիս օգտվում են իրենց պետական լեզվից և ռուսերենից:

Հոդված 8. Փաստաթղթերի ձևակերպումը

Պայմանավորվող կողմերի հիմնարկների կողմից իրավական օգնություն ցուցաբերելու կարգով ուղարկվող փաստաթղթերը կազմվում են նրանց պետական լեզվով և ուղեկցվում են հաստատված ռուսերեն թարգմանությամբ:

Հոդված 9. Իրավական օգնություն ցույց տալու հետ կապված ծախսերը

Պայմանավորվող կողմերը միմյանց իրավական օգնություն են ցույց տալիս անվճար, եթե սույն Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Հայցվող Պայմանավորվող կողմը իրավական օգնություն ցույց տալու գծով ծախսերի հատուցում չի պահանջի: Պայմանավորվող կողմերն իրենք են կրում իրենց տարածքում իրավական օգնություն ցույց տալիս առաջացած բոլոր ծախսերը:

Հոդված 10. Իրավական օգնության մերժումը

Եթե հայցվող Պայմանավորվող կողմը համարում է, որ իրավական օգնություն ցույց տալը կարող է վնաս հասցնել իր ինքնիշխանությանը, անվտանգությանը, հասարակական կարգին կամ հակասում է իր ազգային օրենսդրությանը, նա կարող է մերժել իրավական օգնություն ցույց տալը՝ հայցող Պայմանավորվող կողմին հայտնելով մերժման դրդապատճառները:

Գ Լ ՈՒ Խ II

ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Հոդված 11. Ծանուցման կամ փաստաթղթերի հանձնման մասին հանձնարարությունը

Եթե դատական կամ արտադատական փաստաթղթերը վերաբերում են մյուս Պայմանավորվող կողմի տարածքում բնակության վայր կամ գտնվելու վայր ունեցող անձին, ապա հայցող Պայմանավորվող կողմի կենտրոնական մարմինը հայցվող Պայմանավորվող կողմի կենտրոնական մարմնին հանձնարարություն է ուղարկում ծանուցման կամ փաստաթղթերի հանձնման մասին:

Հոդված 12. Փաստաթղթերի փոխանցման կարգը

1. Փաստաթղթերի փոխանցումն իրականացվում է հայցվող Պայմանավորվող կողմի օրենսդրությանը համապատասխան:
2. Փաստաթղթերի փոխանցման հաստատումը ձևակերպում է փաստաթղթերի փոխանցման՝ հայցվող Պայմանավորվող կողմի տարածքում գործող կանոններին համապատասխան:
Հաստատման մեջ պետք է նշվեն փոխանցման ժամանակը և վայրը, ինչպես նաև այն անձը, որին փոխանցվել է փաստաթուղթը:
3. Փաստաթղթերի փոխանցման փորձի հաստատումը ձևակերպվում է սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված կարգով: Չփոխանցված փաստաթղթերը վերադարձվում են հայցող Պայմանավորվող կողմի կենտրոնական մարմնին:
4. Փաստաթղթերի փոխանցումը կարող է կատարվել նաև՝
ա) փաստաթղթերը փոստով անմիջականորեն հասցեատիրոջը ուղարկելու միջոցով,
բ) հանձնումն իրականացնող Պայմանավորվող կողմի տարածքում գործող միջոցներին համապատասխան՝ նրա հաշվին որոշակի փաստաթղթեր կամ դրանց մասին ծանուցումներ հանձնելու միջոցով:

Հողված 13. Փաստաթղթերի փոխանցումը դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների միջոցով

Պայմանավորվող կողմերից մեկի հիմնարկների հանձնարարությամբ մյուս Պայմանավորվող կողմին առընթեր, հավատարմագրված նրա դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունները կարող են փաստաթղթերը փոխանցել սեփական քաղաքացիներին:

Փոխանցումը, սակայն, չի կարող ուղեկցվել հարկադրական բնույթի միջոցներով և հակասել նստավայր պետության ազգային օրենսդրությանը:

Գ Լ ՈՒ Խ III

ՀԱՆՁՆԱԸՆԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հողված 14. Իրավական օգնություն ցույց տալու մասին հանձնարարության ձևը

Իրավական օգնություն ցույց տալու մասին հանձնարարությունը, հանձնարարության բովանդակությունը հաշվի առնելով, պետք է ունենա հետևյալ վավերապայմանները (ռեկվիզիտները)՝

ա) հայցող հիմնարկի անվանումը,

բ) հնարավորության դեպքում՝ հայցվող հիմնարկի անվանումը,

գ) այն գործի բնույթը և առարկան, որով իրավական օգնություն է հայցվում, հանձնարարության բովանդակությունը,

դ) գործին առնչություն ունեցող անձանց անունները և ազգանունները, նրանց քաղաքացիությունը, սեռը, զբաղմունքը, բնակության վայրը կամ գտնվելու վայրը, ծննդյան թիվը և վայրը, իրավաբանական անձանց համար՝ անվանումը,

ի) իրավաբանական հասցեն կամ գտնվելու վայրը,

ե) սույն հողվածի «դ» կետում նշված անձանց ներկայացուցիչների առկայության դեպքում՝ նրանց անունները, ազգանունները և հասցեները,

զ) փոխանցվող փաստաթղթի անվանումը,

է) գործին առնչություն ունեցող անձանց դատավարական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ՝ հայցող Կողմի օրենսդրությունից կատարված պատճենը կամ քաղվածքը:

Հողված 15. Հանձնարարության կատարումը

1. Փաստաթղթերի փոխանցման մասին հանձնարարության կատարումը հաստատող փաստաթղթում պետք է նշվեն ստացման ժամկետը, ստացողի և հանձնարարությունը կատարող անձի ստորագրությունները: Եթե ստացողը հրաժարվում է ստանալուց, պետք է նշվեն նաև ստանալուց հրաժարվելու դրդապատճառները:

2. Եթե հանձնարարության կատարումը, հայցվող Պայմանավորվող կողմի ազգային օրենսդրությանը համապատասխան, չի մտնում այդ Պայմանավորվող կողմի

հիմնարկների իրավասության մեջ, ապա հանձնարարությունը կարող է վերադարձվել՝ նշելով մերժման դրդապատճառները:

3. Այն դեպքում, եթե Պայմանավորվող կողմի հայցվող հիմնարկը իրավունք չունի կատարելու հանձնարարությունը, նա պարտավոր է նշված հանձնարարությունը կատարման ուղարկել հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու հիմնարկներին, ինչպես նաև այդ մասին ծանուցել հայցող Պայմանավորվող կողմի հիմնարկին:

4. Հայցող հիմնարկը կարող է պահանջել, որ շահագրգիռ կողմերը և, ըստ հնարավորության, նրանց ներկայացուցիչները անմիջականորեն ծանուցվեն հանձնարարության կատարման ժամկետի և վայրի մասին՝ այն հաշվով, որ նրանք կարողանան ներկա գտնվել:

5. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի իր դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների միջոցով, առանց հարկադրանքի կիրառման, կատարել այն դատական հանձնարարությունները, որոնք վերաբերում են իր քաղաքացիներին:

Հոդված 16. Հանձնարարության կատարման հատուկ ձևը

1. Պայմանավորվող կողմերի իրավասու հիմնարկները դատական հանձնարարությունները կատարում են իրենց ներքին օրենսդրությամբ նախատեսված ձևով:

2. Հայցվող հիմնարկը կարող է բավարարել հանձնարարության կատարման հատուկ ձևի կիրառման մասին հայցող հիմնարկի խնդրանքը, բացառությամբ այն դեպքերի, երբ այն անհամատեղելի է հայցվող Պայմանավորվող կողմի օրենքների հետ, չի բխում նրա դատական պրակտիկայից, կամ երբ խնդրանքի բավարարումն անհնար է գործնական դժվարությունների պատճառով:

3. Հայցվող Պայմանավորվող կողմն իրավունք ունի հայցող Պայմանավորվող կողմից պահանջելու հատուցել փորձագետներին վճարված վարձատրությունները և հանձնարարության կատարման հատուկ ձևի կիրառման հետ կապված ծախսերը:

Գ Լ ՈՒ Խ IV

ԴԱՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱԶՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Հոդված 17. Ճանաչման և կատարման ենթակա որոշումները

1. Պայմանավորվող կողմերը, սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան, պարտավոր են ճանաչել և իրենց տարածքներում կատարել մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կայացրած և օրինական ուժի մեջ մտած դատական որոշումները:

2. Սույն Պայմանագրի տեքստում օգտագործվող «դատական որոշումներ» տերմինը նշանակում է.

Հայաստանի Հանրապետության համար՝ քաղաքացիական, այդ թվում՝ տնտեսական գործերով որոշումները, դատարանի կողմից հաստատված հաշտության

համաձայնությունները, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասով քրեական գործերով դատավճիռները, Վրաստանի համար՝ քաղաքացիական (այդ թվում՝ տնտեսական) գործերով որոշումները, դատարաններում կնքված հաշտության համաձայնությունները, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասով դատավճիռները, հայրության ճանաչման և ալիմենտային պարտավորությունների վերաբերյալ փաստաթղթերը, կատարողական մակագրություն ունեցող փաստաթղթերը, դատական ծախսերի վճարման մասին որոշումները:

Հոդված 18. Դատական որոշման և կատարման մասին միջնորդությունը

1. Դատական որոշման ճանաչման և կատարման մասին միջնորդությունը դիմողի կողմից տրվում է այդ որոշումը կայացրած դատարանին և վերջինիս կողմից մյուս Պայմանավորվող կողմի դատարանին է առաքվում սույն Պայմանագրի 5-րդ հոդվածով նախատեսված կարգով: Դիմողը կարող է միջնորդությունը տալ նաև անմիջականորեն մյուս Պայմանավորվող կողմի դատարանին:
2. Դատական որոշման ճանաչման և կատարման մասին միջնորդությանը պետք է կցվեն հետևյալ փաստաթղթերը՝
 - ա) դատարանի կողմից հաստատված դատական որոշման պատճենը. եթե պատճենի մեջ բացակայում է հստակ նշում այն մասին, որ որոշումն օրինական ուժի մեջ է մտել և կարող է կատարվել, ապա պետք է կցվի դատարանի փաստաթուղթը՝ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտած լինելու մասին,
 - բ) հայցող Պայմանավորվող կողմի տարածքում որոշման մասի կատարման վերաբերյալ դատարանի փաստաթուղթը,
 - գ) փաստաթուղթ, որով հավաստվում է, որ դատավարությանը մասնակցություն չցուցաբերած կողմին, իսկ նրա անգործունակության դեպքում՝ նրա պատշաճ ներկայացուցչին, օրենքով սահմանված կարգով ծանուցագիր է հանձնվել դատակոչի մասին:
3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված փաստաթղթերը պետք է ուղեկցվեն հայցող Պայմանավորվող կողմի դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների կամ այլ իրավասու անձի կողմից կատարված վավերացված թարգմանությամբ:

Հոդված 19. Դատական որոշման ճանաչման և կատարման կարգը

1. Դատական որոշման ճանաչումը և կատարումն իրականացվում է այն Պայմանավորվող կողմի դատարանի կողմից, որին ուղղված է միջնորդությունը, այդ Պայմանավորվող կողմի ազգային օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան:
2. Դատարանը, որին ուղղված է միջնորդությունը, որոշումը չի քննում ըստ էության, այլ քննում է այն միայն սույն Պայմանագրի պահանջներին դրա համապատասխանության առարկայի վերաբերյալ:

3. Այն որոշման վերաբերյալ, որի ճանաչման և կատարման մասին միջնորդություն է ստացվել, միջնորդությունն ստացած դատարանը անհրաժեշտության դեպքում կարող է որոշումն ընդունած դատարանից պահանջել ներկայացնել լրացուցիչ նյութեր:

Հոդված 20. Ճանաչման և կատարման իրավաբանական ուժը

Մի Պայմանավորվող կողմի դատարանի կողմից մյուս Պայմանավորվող կողմի դատարանի որոշումների ճանաչումն ու կատարումն ունեն նույն իրավաբանական ուժը, ինչ այդ Պայմանավորվող կողմի դատարանի որոշումների ճանաչումը և կատարումը:

Հոդված 21. Որոշման ճանաչման և կատարման մերժումը

Դատական որոշման ճանաչումն ու կատարումը կարող են մերժվել, եթե՝

ա) այն Պայմանավորվող կողմի ազգային օրենսդրությանը համապատասխան, որտեղ որոշումը կայացվել է, այդ որոշումը օրինական ուժի մեջ չի մտել կամ ենթակա չէ կատարման,

բ) այն Պայմանավորվող կողմի ազգային օրենսդրությանը համապատասխան, որին ուղղված է որոշման ճանաչման և կատարման միջնորդությունը, գործը վերաբերում է հայցվող Պայմանավորվող կողմի դատարանի բացառիկ իրավասությանը,

գ) դատավարությանը մասնակցություն չունեցած կողմին որոշում ընդունած հիմնարկի կողմից, Պայմանավորվող կողմի օրենսդրությանը համապատասխան, չի հանձնվել դատակոչի մասին ծանուցագիրը, կամ նրա լրիվ կամ սահմանափակ անգործունակության դեպքում բացակայել է պատշաճ ներկայացուցիչը,

դ) նույն կողմերի միջև նույն իրավական վեճով հայցվող Պայմանավորվող կողմի դատարանի կողմից արդեն կայացվել է օրինական ուժի մեջ մտած որոշում, կամ այդ գործը հայցվող Պայմանավորվող կողմի դատարանի քննության տակ է գտնվում, կամ արդեն ճանաչվել է այդ նույն գործով երրորդ պետության դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումը:

Գ Լ ՈՒ Խ V

ՕՐԻՆԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԶԱՏՈՒՄԸ: ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

Հոդված 22. Օրինականացումից ազատումը

Պայմանավորվող կողմի կողմից որևէ մեկի տարածքում կազմված պաշտոնական փաստաթղթերը ազատվում են օրինականացումից կամ համանման այլ ձևականություններից, երբ անհրաժեշտ է դրանք ներկայացնել մյուս Պայմանավորվող կողմի տարածքում:

Հոդված 23. Քաղաքացիական կացության վերաբերյալ փաստաթղթերի փոխանակումը

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը պահանջի և օրինական հիմքի առկայության դեպքում մյուս Պայմանավորվող կողմին անվճար տալիս է հայցող Պայմանավորվող կողմին քաղաքացիների քաղաքացիական կացությանը վերաբերող ակտերը և դատական որոշումների պատճենները:

2. Քաղաքացիական կացության դիմումները և ակտերը փոխանցվում են դիվանագիտական կամ հյուպատոսական ճանապարհով. դիմումները և դատական որոշումների պատճենները փոխանցվում են կենտրոնական մարմինների միջոցով:

Հոդված 24. Տեղեկության փոխանակում

Կենտրոնական մարմինները պահանջի դեպքում ուղարկում են տեղեկություն ազգային օրենսդրության և դատական պրակտիկայի վերաբերյալ, ինչպես նաև՝ դատական որոշումների պատճենները:

Գ Լ ՈՒ Խ VI

ԵԶՐԱՓՄԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 25. Փաստաթղթերի վավերականությունը

Մի Պայմանավորվող կողմի դատարանի կամ այլ հիմնարկի կողմից կազմված կամ հաստատված փաստաթղթերը վավերական են այդ Պայմանավորվող կողմի հիմնարկի պաշտոնական կնիքի առկայության դեպքում: Այդ տեսքով մյուս Պայմանավորվող կողմի դատարանի կամ այլ հիմնարկի կողմից դրանք կարող են ընդունվել առանց օրինականացման:

Հոդված 26. Վեճերի լուծումը

Պայմանավորվող կողմերը սույն Պայմանագրի մեկնաբանման կամ կատարման հարցերով ծագած վեճերը կլուծեն սույն Պայմանագրի 5-րդ հոդվածում նշված կենտրոնական մարմինների միջև՝ խորհրդակցությունների միջոցով կամ դիվանագիտական ուղիներով:

Հոդված 27. Խորհրդակցություններ, պայմանագրի փոփոխումը և լրացումը

1. Պայմանավորվող կողմերը պարբերաբար տեղեկություն կփոխանակեն սույն Պայմանագրի կիրառման պրակտիկայի մասին և խորհրդակցություններ կանցկացնեն դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցերով:

2. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ սույն Պայմանագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ուժի մեջ կմտնեն սույն Պայմանագրի 28-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 28. Պայմանագրի ուժի մեջ մտնելը

1. Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման:
2. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում վավերագրերի փոխանակումից 30 օր հետո:
3. Սույն Պայմանագիրը կնքված է անորոշ ժամանակով և կգործի ընդհուպ մինչև վեց ամիս անցնելն այն օրից, երբ Պայմանավորվող կողմերից մեկը դիվանագիտական ուղիներով մյուս Պայմանավորվող կողմին կհայտնի դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:
Կատարված է Թբիլիսի քաղաքում 1996 թվականի հունիսի 4-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, վրացերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:
Սույն Պայմանագրի մեկնաբանման տարաձայնությունների դեպքում հիմք է ընդունվում Պայմանագրի ռուսերեն տեքստը:
Պայմանագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի նոյեմբերի 22-ից: